

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՄԲԵԹԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄ

1980 թուականին Յունաց եւ Հայոց Պատրիարքները եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան Մեծաւորը ծրագիրներ մշակեցին Ս. Յարութեան Տաճարի գմբէթին ներքին մասը նկարագարելու: Զարտարապետներու եւ արուեստագետներու յանձնախումբեր, մինչեւ 1993 թուականը, չը կարողացան վերջնական համաձայնութեան մը բերել նորոգութեան եւ նկարագարողման ծրագիրները:

1993ի Ծննդեան տօնակատարութեանց առիթով Նիւ Եօքէն Երուսաղէմ եկած ուխտաւոր մը Ս. Յարութեան Տաճարին մէջ գմբէթին անփառունակ վիճակին ի տես փափաք կը յայտնէ գմբէթին բարեկարգման ծախքերը հոգալ: Պաղեստինի համար Պապական Միախոնի նախագահ Մօսինէօր Ռօպէրթ Սքըրն, Նիւ Եօքէն, եւ Պրատըր Տանըլտ Մանսիր Երուսաղէմի գրասենականին վարիչը, ուխտաւոր ձօրն Տօթի առաջարկը կը ներկայացնեն Յունաց եւ Հայոց Պատրիարքներուն եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան Մեծաւորին:

Խորհրդակցութիւններ, ծրագրումներ, պայմանագրութեանց նշումներ կը կատարուին, եւ 1994 Օգոստոս 17ի համատեղ նիստին մէջ Սուրբ Տեղեաց պատասխանատու երեք յարանուանութեանց համաձայնութեամբ Ս. Յարութեան Տաճարի Գմբէթի նկարագարողման աշխատանքները յառաջ տանելու արտօնութիւն կը տրուի:

Ընդունուած ծրագրին ամբողջ աշխատանքներուն եւ ծախքերուն հսկողութիւնը, եւ վճարումներուն պատասխանատուութիւնը կը յանձնուի Պապական Միախոնին, առանց որեւէ դրամական պարտաւորութեան ենթարկելու երեք կրօնական Միաբանութիւնները, առանց Հռոմէական եկեղեցւոյ նախնաձեռնութիւն նկատելու սոյն ծրագիրը, եւ առանց Սուրբ Տեղեաց մէջ անոր իրաւունք տալու որեւէ մէկ տեսակի առանձնաշնորհումի:

Կարգ մը խոչընդոտներ եւ շինարարական դժուարութիւններ յաղթահարելով, ընդհանուր

ծրագրին աւարտումին, նկարագարողուած գմբէթին բացման արարողութեան թուական նշանակուեցաւ 2 Յունուար 1997, Հինգշաբթի, առաւօտեան ժամը 10ին, Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ:

Յունաց եւ Հայոց Պատրիարքներուն եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան Մեծաւորին համատեղ հրաւերով արարողութեան ներկայ էին Լատինաց Պատրիարքը, կրօնական համայնքներու կրօնապետներ եւ ներկայացուցիչներ, հիւպատոսներ, Իսրայէլեան եւ Պաղեստինեան պետական անձնակազմներ, Սուրբ Տեղեաց պատասխանատու երեք Միաբանութեանց անդամներ, եւ իրենց երգչախումբերը, համայնքներէն աշխարհական ներկայացուցիչներ, Պապական Միախոնի վարիչներ, բարերար Տէր եւ Տիկին ձօրն եւ Սըրի Տօթի, Նիւ Եօքէն, արուեստագետ Արա Նորմարդ եւ Տիկինը, Ֆրէզնօն, եւ շինարարական քաժանմունքներու պատասխանատուներ:

Յայտագրին բացումը կատարեց Լուսարարապետ Տ. Դաւիթ Արք. Սահակեան, եւ իւրաքանչիւր երգչախումբի շարականներու երգեցողութենէն յետոյ, կատարուեցաւ Սուրբ Գրական ընթերցում եւ աղօթք: (Իւրաքանչիւրը իր լեզուով):

Նկարագարողուած Գմբէթին բացումը կատարուեցաւ, մասնաւոր նարտարութեամբ հաւաքելով այն ընդարձակ ծածկոցը, որ Սուրբ Գերեզմանի կառոյցէն վեր տեղաւորուած էր, աչքերէն կը ծածկէր նկարագարողուած Գմբէթը:

Բարերար Տէր եւ Տիկին ձօրն եւ Սըրի Տօթիին ներկայացուեցան նուէրներ, եւ ներկաները հիւրասիրուեցան, Ս. Յարութեան Տաճարէն ոչ շատ հեռու Յունաց Պատրիարքարանի մէջ:

Երեկոյին, Նօթըր Դամի մէջ, ընթրիք տրուեցաւ ի պատիւ բարերարներուն երեք Միաբանութեանց ներկայացուցիչներու մասնակցութեամբ: